



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ № 23Լ**

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՃԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ
ԲԱԺՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՉԱՆՑ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՏՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ԴԱՏԱՐԱՆԸ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի 19.03.2018թ. թիվ N-01/18-Ու որոշումը, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ մասը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի քրեական մասնագիտացման բաժնում 2018 թվականին ընդգրկված՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց համար Արդարադատության ակադեմիայում գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցում կազմակերպելու համար սահմանել դատարանը և ուսուցման ղեկավարների անունները և պաշտոնները.

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան

1. դատավոր **Անդրանիկ Մնացականյան** (համաձայնությամբ).
2. դատավոր **Մխիթար Պապոյան** (համաձայնությամբ).
3. դատավոր **Կարեն Մարդանյան** (համաձայնությամբ):

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2018թ. մարտի 20
ք. Երևան